# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԴԱԼԼԱՍ-ՖՈՐԹ ՈՒԸՐԹ ԹԵՔՍԱՍԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 10-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ, ԲԱՐԵՊԱՇՏ ՀՒԱՏԱՑԵԱԼՍ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ, ՈՐ Ի ԴԱԼԼԱՍ, ԱՄՆ

ԱՄՆ հայոց արևելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից ուրախութեամբ փեղեկացանք, որ այս փարի լրանում է Դալաս-Ֆորթ Ուըրթ Թէքսասի Սուրբ Սարգիս եկեղեցու հիմնադրման 10-ամեայ յոբելեանը:

Այս նշանակալի առիթով 1700-ամեայ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրփաբուխ շնորհաւորանքներն ենք բերում թեմակալ բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանին, համայնքի հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տ. Հայկազուն ծ. վարդապետ Նաջարեանին, Ծխական Խորհրդի պապուարժան անդամներին և բարեպաշփ բոլոր հաւատացեալներին:

Սիրելի հայորդիք,

Մեծապէս ուրախ ենք, որ Դուք հանդիսաւորապէս նշում էք Սուրբ Սարգիս Եկեղեցու հիմնադրման և առաքելաշաւիղ ու ազգօգուտ գործունէութեան 10-րդ փարեդարձը: Հոգով մասնակից ենք փօնի Ձեր բերկրանքին և աղօթակից՝ Ձեզ: Ձեր խանդավառութիւնը վկայութիւնն է հանդէպ Առաքելական Մեր Մայր Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ունեցած Ձեր հաւափարմութեան, որով շաղախուած են համայնքային կեանքից ներս Ձեր բոլոր բարի գործերը: Տեղեակ ենք, որ հայրենաբոյր և եկեղեցանուէր ոգին կենդանի ու գործող է Ձեր համայնքում և կրթութեան ու դասփիարակութեան ճանապարհով փոխանցւում է երիփասարդ սերնդին:

Բարձր ենք գնահատում, որ Ձեր կողմից բազում բարեսիրական ծրագրեր են իրականացւում նաև Մայր Հայրենիքում՝ միփուած հայաստանեան թեմերի զօրացմանն ու հայրենական կեանքի շինութեանը: Արդարև, մեր ժողովրդի բոլոր

զաւակների մասնակցութեամբ է հասփամփում, շէն ու պայծառ հայրենական և եկեղեցական մեր կեանքը:

Սիրելիներ, Հայրապետական Օրհնութեան այսու գրով բերելով Ձեզ Մեր բարեմաղթանքները, ի խորոց սրտի աղօթում ենք, որ Բարձրեալ Տէրը Իր սիրոյ ու խնամքի մէջ պահի Դալլասի Սուրբ Սարգիս եկեղեցին, հանապազ օրհնի և Իր բազում պարգևներով առատապէս շնորհազարդի Եկեղեցու նուիրեալներին ու բոլոր հաւատացեալներին:

Մեր յորդորն ու պատգամն է Ձեզ ամենքիդ, որ Ձեր բարի գործերով շարունակէք համայնքային Ձեր կեանքի լաւագոյն աւանդները՝ ի շինութիւն Տիրախնամ Ձեր թեմի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

*«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն»:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 27-ն Հոկտեմբերի
Յամի Տեառն 2001 և ի թուին հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 196